14361
hmy.

ԿԱՆՈՆ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

ՍՐԲԱԼՈՅՍ ՄԵՌՈՆԻՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

1890—ՌՅԽ.

14361

14361

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ· Տ· ՄԱԳԱՐԱՋ· Ա·

ՎԵՀՍԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՅ

ԱՆՈՒԱՆՔ ՆԻՒԹՈՑ

ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԻ

	գրամ.
Ցուտ պալասան·	ի։
Հաց պալասան·	ժ։
Ղարանֆուլ·	ժ։
Ճաւզպուա·	ժ։
Ղասապզարիրէ·	ժ։
Սմպուլհնդի	ժ։
Քապապիէ·	ժ։
Պասպասա ուրուվի·	ժ։
Սատէճհնդի·	ի։
Տարչին·	ժ։
Խունկ·	ժ։
Ղրտիմանէ·	ի։
Բուխուր մարիամ·	ժ։
Ճաւրի·	ժ։
Սանդալապեաս՝	ի։
Միեսայիլէ՝	ի։
Զաֆրան՝	ի։
Մարտակուշ՝	ի։
Մահլաբ՝	ժ։
Իթխիրմէքէ՝	ի։
Սօտիքօհի՝ որ է կիպէռիս՝	ժ։
Ասարիոն՝	ժ։
Զրվարդ՝	խ։
Պաղուռնաճ՝	խ։
Մանուշակ՝	ճի։
Լինուֆար՝	ճի։
Նարնջի ծաղիկ՝	խ։
Ֆլֆուլ՝	ժ։
Կասիտերև՝	խ։
Մրտիտերև՝	խ։
Նէրկիզ՝ որ է նէճէս՝	խ։
Հապլզար՝	ի։

Նուամա՝ որ է կասլիծապիկ՝ ըստ բաւականին։

Լատէն՝	ժ։
Զանճաֆիլ՝	ժ։
Մազտաքի՝	ի։
Ցուտ՝ որ է ծխանելիք՝	ի։
Պալասան՝	ճի։
Ամպար՝	ե։
Մուշկ՝	ե։
Սնպուլխաթայի՝	ժ։
Պանաւշի քեօք՝	ժ։
Հոռոմխունկ՝ որ է միայ՝	ի։
Նարնջի ծաղիկի ջուր։	ի·
Վարդեջուր։	ծ·

Եւ թէ յայս նիւթոցս մին և կամ երկու և երեք պակաս լիցի՝ մի արգելցես զՄեռոնի օրհնելն։

Իսկ պալասանն պարտ է նախ՝ կակղացուցանել ձիթով՝ որ միաւորի ընդ իւղոյ ձիթենւոյն։ և թէ ոչ լինի կակղացուցեալ՝ յայնժամ յատակն նստի և ոչ տայ զզօրութիւն իւր։ և լինի կորուստ պալասանին։ բայց ըզպալասանն լաւ տաքացուցանեն նախ որիշ փոքր զազանով· նոյնպէս և փոքր ինչ իւղ ձիթենւոյ և եռացուսցեն յայլ փոքր զազանոջ· և ապա զեռացուցեալ պալասանն արկանեն ի մէջ եռացուցեալ իւղոյ ձիթենւոյն։ զի ի միասին եփեսցին և լաւապէս միաւորիցին ընդ միմեանս։ Բայց որքան շատ իցէ պալասանն այնքան գովելի է։

Ցաղագս եփելոյ զնիւթս սրբոյ Մեռոնին, կարի դիւրագոյն և հեշտ։

Զայս նիւթքս ուրոյն ուրոյն ծեծեալ՝ մանրեա՛ և մաղեա՛, և առ զչափաւոր զաղան մի, և ծեփեա՛ խմորով ի մէջն, և արկ ի նմա ձէթ՝ և իւղ ձիթենւոյ՝ և գինի, և զնիւթս ծաղկանցն։ Եւ սկուռաղ մի ի բերան զաղանին դիր, և խմորով ծեփեա՛, և քար մի՝ չորս հօխայի չափ՝ դիր ի վերայ սկուռաեղին՝ որ հաստատուն մնայ, և ի ներքոյ վառեա հուր, և յորժամ սկանիցի եռալ և եփիլ, ապա սակաւացո՛ զհուրն, որ լինիցի չորս և կամ հինգ անծող. աւելի չլինի։ Եւ այսպիսի հանգարտութեամբ եփեա՛ յաւուրս երկուս՝ տիւ և գիշեր, և երբեմն բաց և խառնեա՛. մի գուցէ ի տակն փակիցի, և ապա յետ երկուց աւուրց՝ առ ի հրոյն, և կացցէ մինչև յաւուրս երկուս, որ լաւ պարզի. ապա քամեա՛ մաքուր կտաւոք, և պահեա մինչ ի յօրհնութիւն Մեռոնին, և թէ աւելի իցէ նիւթն, ըստ բաւականին պահեա յայնմ աւուր, և զաւելորդն յառաջագոյն խառնեա ի յանօթն մեծ, որ լիցի իւղով ձիթենւոյն, Բայց և զայն յառաջագոյն եռացս հրով. և զխառնելի նիւթսն ևս զոր եփեալ և քամեալ ես՝ նոյնպէս ջերմացո և ապա խառնեա, որ լաւ միաւորիցին։ Եւ ամենից վարձատրիչն վարձատրեսցէ զքեզ ամէն։

Կանոն օրհնութեան սրբոյ Մեռոնին։

Յորժամ հանդերձեալ լինին օրհնել զսուրբ Մեռոնն Աստուածագործ։

Նախ՝ ժողովեսցեն զծաղկունս, որպէս յայտ է ի ցուցակին. և եփեալ զնոսա, առցեն զնիւթս նոցին, և դիցեն ի սարկաւագարանն, ի կողմն հիւսիսոյ ընդ յիշատակի մարմնոյ և արեան Տեառն։

Եւ իւղս ձիթոյ ըստ բաւականին լցեալ յանօթս, և դիցեն յաւագ խորանն քառասուն աւուրբ յառաջ, և ծածկեսցեն եօթն շարով։

Եւ յաւուր մեծի հինգ շաբաթոջ, և կամ յաւուր Պէնտէկոստէի, և կամ յաւուրս ինչ պատշաճաւորս։ Հայրապետն զգեստաւորեալ՝ հանդերձ ժառանգաւորօք եկեղեցւոյ՝ երկոտասան եպիսկոպոսիւք. և երկոտասան սարկաւագօք և դպրօք. որք ունիցին խաչս, և գաւազանս, և երկոտասան բուրվառս, և երկոտասան քշոցս, և մոմեղէնս։

Եւ կատարեն զխորհուրդ սուրբ պատարագին՝ մինչև ցողջոյնն, և ապա նստցի Հայրապետն յաթոռ, և երկոտասան եպիսկոպոսքն կալով շրջապատ առաջի. ունելով ի ձեռս իւրեանց զսուրբ նշանն կենաց, և զաջ՝ սրբոյ Լուսաւորչին. և այլ զաջ՝ և գնշխարս սրբոց, և մեռոնաշիշ մի լցեալ՝ հին մեռոնաւ։

Եւ ապա սարկաւագունք. և դպիրք գնացեալ ի սարկաւագարանն. զյիշատակ մարմնոյ և արեան Տեառն, և զնիւթ ծաղկանցն՝ առեալ փառօք և ճոխութեամբ, որք զբրովբէիւք պաշտելով և քաղցր եղանակաւ բերեալ դիցեն յաւագ խորանն։

Յայնժամ կատարէ եպիսկոպոսապետն զխորհրդածութիւն սրբոյ Մեռոնին, և սկսանի՝ «աղմոս կցորդ ծլա։

Ալէլուիա ալէլուիա.

Անդ ծագեցից եղջիւր ի Դաւիթ՝ պատրաստ արարից զճրագ օծելոյ իմոյ։

Ընթերցուածս ի ծննդոց։

Եւ եղև յետ քառասուն աւուր եբաց Նոյ զպատուհան տապանին զոր արար. և արձակեաց զաղաւնին, տեսանել թէ ցածուցեալ է ջուրն յերեսաց երկրէ։ Եւ չգտեալ հանգիստ ոտից իւրոց, դարձաւ առ Նոյ ի տապան անդր, զի ջուրն դեռևս ունէր զամենայն երեսս երկրի։ Եւ ձգեաց զձեռն իւր ընկալաւ զնա. և էառ անդրէն զնա ի տապան անդր. և դադարեաց աւուրս եօթն։ Եւ դարձեալ արձակեաց զաղաւնին ի տապանէ անտի. և դարձաւ առ նա աղաւնին ընդ երեկս. և ունէր տերև ձիթենւոյ շիւղ ի բերան իւրում. և գիտաց Նոյ եթէ ցածուցեալ են ջուրքն յերկրէ։

Ընթերցուածս յԵլից։

Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ, առ դու խունկս անուշս. և ծաղիկ բնտիր զմանեանեաց, հինգ հարիւր սիկղ. և և կինամոն զանուշ. զկէս այնորիկ երկերիւր և յիսուն։ Եւ հիրիկ հինգ հարիւր սիկղ ըստ սրբութեանն. և զխունկ եղէգն զանոյշ՝ երկերիւր և յիսուն. և իւղ ձիթենեաց հիմնաւ միով։ Եւ արասցես զայն իւղ յօծումն սրբութեան. իւղ եփեալ ըստ արուեստի իւղագործաց. իւղ յօծումն օծութեան եղիցի. և օծցես ի նմանէ զխորանն վկայութեան, և զսեղանն և զամենայն կահ նորա. և զսեղանն խնկոց և զսեղանն ողջակիզաց, և զամենայն կահ նորա՝ և զաւազանն և զյատակ նորա՝ և սրբեսցես զնոսա, և եղի-

ցի սրբութիւն սրբութեանց. և ամենայն որ մերձենայցէ ի նոսա սրբեսցի։ Եւ զԱհարոն և զորդիս նորա օծցես և սրբեսցես զնոսա ինձ ի քահանայութիւն։ Եւ ընդ որդիսն իսրայէլի խօսեսցիս և ասասցես՝ իւղս այս յօծումն սրբութեան եղիցի ձեզ յազգս ձեր. ի մարմին մարդոյ ոչ օծանիցի։ Եւ ըստ այդմ՝ հանդերձանի ոչ առնիցէք ձեզ այդպիսի. զի սուրբ է, և ի սրբութիւն եղիցի ձեզ՝ որ զք առնիցէ այդպիսի՝ և որ զք տացէ ի դմանէ այլազգւոյ՝ սատակեսցի ի ժողովրդենէ իւրմէ։ Եւ ասաց Երսելիէլ զիւղն օծութեան զսուրբ և զհանդերձանս խնկոց, գործ մաքուր իւղագործաց։

Յովհաննու Առաքելոյն ի կաթուղիկեայց թղթոյն է ընթերցուածս։

Եւ զուք զօծութիւն ունիք առ ի սրբոյն. և գիտէք ամենեքին։ Ոչ գրեցի ձեզ՝ եթէ ոչ գիտէք զճշմարտութիւնն. այլ թէ գիտէք զնա. և թէ՝ զի ամենայն ստութիւն ոչ է ի ճշմարտութենէ անտի։ Իսկ ո՞վ է սուտ, թէ ոչ որ ուրանայ թէ Յիսուս չէ Քրիստոսն. նա իսկ է նեռն, որ ուրանայ զՀայր և զորդի։ Ամենայն որ ուրանայ զորդի, և ոչ զՀայր ընդունի. իսկ որ խոստովանի զորդի, նա և զՀայր ընդունի։ Զուք՝ զոր լուայքն ի սկզբանէ ի ձեզ բնակեսցի, զի եթէ ի ձեզ բնակեսցի, զոր ի սկզբանէն լուայք՝ և զուք յՈրդի և ի Հայր բնակեսջիք։ Եւ այսք են աւետիքն՝ զորս աւետարանեաց նա մեզ զկեանսն յաւիտենականս։

Ղէղուիա՝ Սաղմոս. ՃԼԲ։

Օ՜ի բարի կամ՝ զի՞ վայելուչ, զի բնակին եղբարք ի միասին։

Աւետարան ըստ Մատթէոսի։

Իբրև եկն Յիսուս ի բեթանիա ի տուն Սիմոնի բորոտի։ Մատեաւ առ նա կին մի. որ ունէր շիշ իւղոյ ծանրագնի. և թափեաց ի գլուխ նորա ի բազմականին։ Իբրև տեսին աշակերտքն՝ բարկացան, և ասեն, ընդէ՞ր է կորուստ այդ իւղոյդ։

Օ՜ի մարթ էր վաճառել զդա մեծագնի՝ և տալ աղքատաց։ Գիտաց Յիսուս՝ և ասէ ցնոսա. զի՞ աշխատատունէք զկինդ. գործ մի բարի գործեաց դա յիս։ Յամենայն ժամ՝ զաղքատս ընդ ձեզ ունիք. բայց զիս՝ ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։ Արկանել զորա զիւղդ ի մարմին իմ՝ առ ի թաղելոյ զիս նշանակեաց։ Բայց ամէն ասեմ՝ ձեզ՝ զի ուր քարոզեսցի աւետարանս այս՝ ընդ ամենայն աշխարհ խօսեսցի, և զոր արար դա ի յիշատակի դորա։

Սարկաւագն քարոզէ։

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ի Տեառնէ՝։

Եւ եպիսկոպոսապետն մատուցանէ զաղօթս զայս խնկարկութեան։

Աստուած տուօղ ամենայն մեծամեծ բարութեանց, և բաշխօղ զանազանից պարգևաց ըստ բղխման անսպառ շնորհի ողորմութեանդ քոյ։ Դու անբաւական և անժամանակ Աստուած՝ կամեցար ևս՝ առատապէս արտափայլել զշնորհս և զպարգևս ողորմութեան արարչագործ սէրութեանդ քոյ, զի մի՛ դու միայն վայելեսցես ըզբարութիւն անճառելի թագաւորութեանդ քոյ։ Վասն այսորիկ և յարարածս քոյ բազխեալ տարածանես ի սկզբանէ։ Ուստի ստեղծեր քեզ սպասաւորս գերապայծառս՝ զանմարմին և դՀրեղէն զօրս հրեշտակաց ի յերկինս՝ ի փառաբանիչս մեծաւորս աստուածութեանդ քոյ անդադար, և ի վայելել զփառս լուսաւորութեանդ քոյ։ Եւ ոչ բաւականս զնոսա վարկեր քոյ անզուգական տէրութեանդ փառաբանիչ, և անսպառ բարեացդ վայելօղ, վասն որոյ ի գթութեանցդ յաղթեցեալ՝ ստեղծագործեցեր՝ ի հողոյ զմարդն ըստ պատկերի քո ձևացուցանելով.

և իշխան զոյիցս և կացուցեր։ և հաղորդս և փառաբանիչս ընդ վերնական զուարթնոցն սաստրաբնակ հողանիւթն հաստատեցեր։ հոգւով բանականաւ զարդարեցեր՝ և փառօք պայծառացուցեր, որ և այժմ ըզմեր անարժանութիւնս ի թիւ անդրանկացն գրելոցն յերկինս կարգեցեր։ Եւ ի հոգևորական պաշտօնս յայս զմեզ հրաւիրեցեր, և քահանայապետս և սպասաւորս քո ահաւոր տէրութեանդ արժանաւորեցեր։ և ըստ վերնական դասուցն և ի տաճարի փառաց անուանդ քո յօրինեցեր քահանայապետս, երիցունս, սարկաւագունս, սաղմոսերգօղս։ որպէս և հաճոյ եղև ամենատես թագաւորութեանդ քո՝ ընտրել զսոսա ի ժողովրդենէ քումմէ, և առնել կցորդս պաշտաման վերնական դասուցն։ Ուստի և մեք հողածնեալքս, տկարք և անարժանք այսմ մեծի կոչման։ զորս հրաւիրեցեր ի պաշտօն փառաց անուան քո մեծի՝ խոնարհեալ աղաչեմք զներօղ մարդասիրութիւնդ քո՝ որ ոչ երբէք հայիս յանարժանութիւն ստեղծուածոց քոց։ այլ ընդունիս անյիշաչարութեամբ զհայցուածս մեր, և ոչ արգելուս զպարգևս քո զառատ շնորհս՝ ծագելով զողորմութիւն աստուածութեանդ քո։ Զթած և այժմ յանարժանութիւնս մեր և ի ժողովուրդս քո վասն մեծի անուանդ քո որ կոչեցաւ ի վերայ մեր՝ ընկալ զխունկս զայս ի հոտ անուշից ի բուրումն առաջի քո զթութեանդ, և առաքեա՛ ի մեզ զշնորհս հոգւոյդ սրբոյ, առ ի կատարումն մեծի պաշտամանս այսորիկ զոր քահանայագործեմք հրամանաւ սրբոց քոց Առաքելոցն։ Եւ մի՛ եղեցի մեզ խորհուրդս այս ի դատապարտութիւն։ և մի՛ անցեալ զնայցեմք ամօթալից, և զտանիցիմք պարտաւոր յահաւոր ատենի քո։ այլ ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց

մերոց զտցի խորհուրդ։ Զի քեզ միայնոյ վայելէն փառք և պատիւ և իշխանութիւն։ հանդերձ միածին որդւովդ՝ և իշխանակից սուրբ հոգւովդ։ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Եւ Սարկաւագն քարոզէ։

Եւ և խաղաղութեան զտէր աղաչես։ Օրհնեա՛ տէր։

Եւ Եպիսկոպոսապետն ասէ զաղօթս։

Աստուած հարց և տէր ողորմութեանց։ դու՝ որ ստեղծեր զմեզ ի կեանս և յանապականութիւն, ի հաւանիլն մեր բանսարկուին, և յանցանելն զպատուիրանօք քովք, վճռեցաք ի ծառայութիւն մեղաց և մահու։ Իսկ դու գթացեալ ի ստեղծուածս ձեռաց քոց, դարձեալ ի կեանս կամեցար կոչել ի ձեռն հաճութեան միածնի որդւոյ քոյ և տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ որ զանպատումն զայս և զանհաս քահանայագործութիւնս աւանդեաց մեզ՝ որ և զծանրութիւն մեղաց մերոց և զամօթ արկեալ զինքեամբ՝ յերկնայինն խորհրդականութիւն հրաւիրեաց։ և նորոգեալ մեզ զճանապարհ փրկութեան ջրով և հոգւով՝ զողորմութիւն ցնծութեան շնորհեաց մեզ։ Եւ արդ՝ նոյն տէր մեր՝ խոնարհեալ յաղաչանս ծառայից քոց, առաքեա՛ զպարարտութիւն ողորմութեան քոյ ի պտուղ ճիթենւոյս այսորիկ։ զոր եռուր յօգտակարութիւն և ի փրկութիւն ամենայն մարդկութեանս։ և բնակեցո՛ ի մեզ զշնորհս հոգւոյդ քոյ սրբոյ և բարերարի, ի գործակցութիւն և ի լրումն սուրբ խորհրդոց քոց և պաշտամանց՝ զորս կատարեմք ի փառս քոյ։ Որպէս զի՝ արժանի լիցուք սուրբ սրտիւ փառաւորել զեղ Աստուած։ որում երկրպագեն հրեշտակք և հրեշտակապետք։ աթոռք՝ տէրութիւնք՝ պետութիւնք՝ և զօրու-

թիւնք։ Որում առաջի կան պատուականք չորեքկերպեան կենդանիքն շուրջ կալով զսուրբ աթոռով փառաց քոց՝ բազմաղէմ և բազմահայեաց վեցթեւեան սերովբէք և քերովբէք. որք երկու թեւօքն ծածկեն զերեսս իւրեանց, և երկոքումբք զոտս իւրեանց, և երկոքումբքն թռուցեալք աղաղակեն ընկեր՝ առ ընկեր՝ անդադար ձայնիւք և անլուռ բերանովք զյաղթական օրհնութիւնս երգեն գոչելով, և փառաբանելով։

Եսեն դպիրքն ձայնիւ.

Սուրբ՝ սուրբ՝ սուրբ տէր զօրութեանց, լի են երկինք և այլն։

Եւ սարկաւագն քարոզէ։

Եւ Աս խաղաղութեան զտէր աղաչ"։ Օրհնեա՛ տէր։

Եւ Եպիսկոպոսապետն ասէ։

Սրբոց սուրբ, և ամենայն սրբոց և սրբութեանց տուիչ՝ միայն ամենակալ Աստուած՝ որ զերկնաւոր զքո շնորհս անբաւ մարդասիրութեամբդ քով պարգևեցեր մարդկան, զիմանալի և զհոգևորական քահանայապետութեանն օրինակ որ յերկինս, և յերկրի շնորհեցեր ի ձեռն միածնի քոյ. ի հաղորդակից առնելով զմեզ երկնայնոցն։ Որպէս ի ձեռն Մովսիսի՝ զօծեալ արար զիւղն քահանայական, կազմել հրամայեցեր. զի և յայնժամ եղիցի քեզ ի քահանայութիւն՝ ի թագաւորութիւն՝ յազգ սուրբ և ժողովուրդ սեպհական։ Դու և այժմ միայնդ Աստուած մարդասէր տէր. առաքեա զսուրբ Հոգիդ քո յերկնից, ի սուրբ աթոռոյ քումմէ յառաջիկայ յիւղս այս. զի սրբեսցի կոչմամբ անուանդ քոյ, և միածնի որդւոյ քոյ սիրելւոյ, և սուրբ հոգւոյ քոյ՝ յօծումն սրբութեան գործակցացս ծառայիցս քոց. զորս լուսաւորեցեր և վերատին ծնար և սրբեցեր յամենայն կեղծաւորութեանց, զի սուրբ մնասցեն ի սրբութեան Քրիս-

տոսի քոյ, և արժանի արա զմեզ սուրբ սրտիւ և պարզ մտօք բանալ զբերանս մեր և ասել։ Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Եկա՛յք ժողովուրդք զօրհնութիւնս ընդ հրեշտակս երգեսցուք նմա, որ ետ մեզ զիւղս այս ի փրկութիւն կենդանութեան՝ ասելով. սուրբ տէր՝ սուրբ տէր՝ սուրբ ես տէր Աստուած մեր։

Եւ Սարկաւագն քարոզէ։

Եւ Աս խաղաղութեան զտէր աղաչ"։ Օրհնեա՛ տէր,

Եւ Եպիսկոպոսապետն ասէ։

Տէր Աստուած, որ մեծդ ես և սքանչելի ի փառս քոյ, որ պահես զուխտս և զողորմութիւն սիրողաց քոց, որ շնորհեցեր զթողութիւն մեղաց ի ձեռն սրբոյ որդւոյ քո զոր նոր-

բոդումն կենաց պարգևեցեր որք հնացեալքն էին ի մեղս։ Դու ես որ իմաստնացուցանես ըզկոյրս և կանգնես զանկեալս՝ որ սիրես զարդարս և պահես ըզտնանկս։ Դու ես որ հաներ զմեզ ի խաւարէ և ի ստուերաց մահու. ասացեր կապելոց թէ՝ ելէք, և որք ի խաւարի թէ՝ յայտնեցարո՛ւք. քանզի ծագեաց ի սիրտս մեր լոյս գիտութեան Քրիստոսի քոյ՝ որ յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ։ Որք ընկալան զնա՝ ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել ի ձեռն փրկութեան վերստին ծննդեան՝ զորդեգրութիւն մեզ շնորհելով, և ընդունողս զմեզ արար անուան իւրոյ սրբոյ, և փոխեաց զմեզ ի բռնութենէ բանսարկուին առ իւր յարքայութիւնն։ Դու ամենեցուն տէր՝ քանզի ո՛չ կամեցար ըստ հնոյն՝ արեամբ ուխտիցն սրբել զպղծեալսն. այլ իւղով սրբով ետուր երկիւղածաց քոց նշան՝ կնքելով հոգւոյդ քո բարերարի։ Տուր և

մեզ շնորհս առ ի սպասաւորութիւնս յայս՝ որպէս եւտուր Սովսիսի հաւատարիմ ծառային քո և օրէնսդրի, և Սամուէլի, և Յովհաննու ընտրելոց քոց. և որք մի ըստ միոջէ բարեգործք եղեն յազգս իւրեանց: Նոյնպէս և զմեզ արժանաւորեա տէր. լինիլ սպասաւոր նորոյ ուխտի քոյ՝ յօծանել զժողովուրդս քո զոր ընկալար ի ձեռն արեան միածնի քոյ՝ լինիլ նոցա հօտ Քրիստոսի՝ ի թագաւորութիւն՝ ի քահանայութիւն՝ յազգ սուրբ ի ժողովուրդ սեպհական. որպէս զի մերկացեալ զամբարշտութիւն և զաշխարհական ցանկութիւն. մեռցին մեղացն և կեցցեն արդարութեան. զգեցեալ զՔրիստոսի զօրութիւն առաջեկայքն որք զալոցն իցեն ի ձեռն օծմանս այսորիկ: Արդ եղեցի տէր զօրութեամբ ամենասուրբ Հոգւոյդ քոյ իւղս այս՝ իւղ ցնծութեան, զգեստ լուսաւոր՝ օծումն թագաւորութեան, սրբութիւն հոգւոց և մարմնոց. շնորհք հոգևորական. պահապան կենաց. կնիք արդարութեան, զէն հաւատոյ՝ նահատակ յաղթող ընդդէմ ամենայն բանսարկութեանց դործոց. օդոց փրկութիւն. ցնծութիւն սրտից՝ ուրախութիւն յաւիտենական. զի որ ոք օծցի ի սմանէ վերստին ծննդեան իւղով, երկիւղած լեցի Աստուծոյ և աներկիւղ ի հակառակորդէն: Եւ առաջի կալով քեզ յաւուրն դատաստանի, փայլեսցին որպէս զաստեղս երկնից ի պայծառութիւն սրբոց. ոչ ունելով զարատ կամ զաղտեղութիւն. այլ ընկալցին զյաւիտենական հանգիստն՝ ի գործս բարիս հաստատեալ ի պարգևս շնորհացս այսոցիկ, և ընկալցին զյաղթութեան նշանակն՝ վերըստին կոչմանն յողորմութիւն գթութեան Քրիստոսի քոյ: Որում՝ ընդ քեզ վայել է փառք և զօրութիւն հանդերձ սուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս՝՝:

Քարոզ վասն սրբոյ Իւղոյն:

Վասն գտանելոյ մեզ զողորմութեանն շնորհս առաջի տեառն. զտէր աղա՝՝:

Վասն ընդունելի լինելոյ աղաչանաց մերոց, որպէս խուսկիս առաջի տեառն. զտէր աղա՝՝:

Վասն առաջիկայ իւղոյս. զտէր աղա՝՝:

Վասն զի օրհնելով սրբեսցէ և լցուսցէ զսա ամենայն շնորհօք և հոգւով սրբով. զտէր աղա՝՝:

Եղիցի սա՝ ամենեցուն որք տեառնագբրին սովաւ. իւղ ցնծութեան և զգեստ լուսոյ. զտէր՝՝:

Զողորմութիւն և զգթութիւն ի տեառնէ խնդրեսցուք:

Եւ Աստ միաբան վասն՝՝:

Զանձինս մեր և զմիմեանս՝՝:

Ողորմեաց մեզ տէր՝՝:

Եւ Եպիսկոպոսապետն ասէ զաղօթս:

Պարձեալ մատուցանեմք քեզ թագաւոր յաւիտենական. կատարելով զքո տօնիս խորհուրդ. և զպատուական կնիք քո սուրբ եկեղեցւոյս, զՄեռոնս որով կնքեմք զհոգւոց երակս՝ քո անուամբդ որ յառաջն իջանէր ի մորուսն և ի գլուխն Ահարոնի, ի մորուացն իջանէր ի գրապանս զգեստու նորա: Եւ այժմ տէր՝ եկեղեցիս քո որ հաստատեցաւ յորդիդ ճշմարիտ, մատուցեալ ընդունի զիւղս, զոր հերով գլխոյն ջնջեաց որ զոտիքն տեառն իջանէր. քանզի ո՛չ էր հնար զերկնային խորհուրդն ի հողեղէն տեղիս հաստատանել: Իւղ թափեալ է անուն քո ասաց գիրն. վասն այսորիկ օրիորդք սիրեցին ըզքեզ. զի նշան է սա թագաւորական. մարգարէական. քահանայական խորհուրդ ճշմարիտ. արդարև կնիք, որով տաս երկիւղածաց քոց նշան՝ առ ի փախչել յերեսաց աղեղան չարին. զի արժանի է վասն այսորիկ տէր, և զառաջին տղայոցն կերակուր մատուցանել՝ որպէս և հաւատարիմն քո Պօղոս՝ որ ի քեզն մերձաւորէին, և զաստուածային խորհուրդն ընդունելոց էին, յառաջքան ըզհաստատուն և զկատարեալ կերակուրն՝ արբոյց կաթն նոր ծնունդ որք ի քեզն հաւատացեն: Արդ՝ այժմ և մեք զսա

պատրաստելով որպէս կաթն՝ մատուցանեմք, զի ամենայն ոքք ի սմանէ առնուցուն, արժանի լեցին ընդունիլ զհաստատուն կերակուրն. զճշմարիտն, զերկնայինն, ի շնորհաց միածնի քոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Որով և ընդ որում քեզ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ. փառք և պատիւ և զօհութիւն վերառաքին յաւիտեանս յաւի:

Խաղաղութիւն ամենեցուն:

Եւ ընդ հոգւոյդ քո՛մ:

Աստուծոյ երկիրպագեսցո՛ք:

Առաջի՛ քո՛ տէր:

Ընկալ և զայս զմեր զաղաչանս Քրիստոս թագաւոր՝ խոնարհեցո՛ զունկն քո յաղաչանս մեր՝ և առաքեա՛ զողորմութիւնս քո ի գործս ձեռաց քոց անտես առնելով զմեղս մեր՝ դարձ առ մեզ Աստուած փրկութեան մերոյ. երևեցո՛ զերեսս քո ի մեզ և կեցցուք՝ զի քո՛ է իշխանութիւն և թագաւորութիւն. այժմ և միշտ և յաւիտա՛:

Սաղմոս կցորդ Դ:

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և եռաւբ ուրախութիւն սրտից մերոց:

Ընթերցուածս Երգոց երգոյն Սողոմոնի:

Համբուրեսցէ զիս ի համբուրիցս բերանոյ իւրոյ՝ վասն զի բարի են ստինք քո քան զգինի: Եւ հոտ իւղոց քոց քան զամենայն խունկս իւղ թափեալ է անուն քո. վասն այնորիկ օրիորդք սիրեցին զքեզ: Եւ ձգեցին զքեզ՝ զհետ քո ի հոտ իւղոց քոց ընթացուք:

Ընթերցուածս ի Զաքարիայ մարգարէ Է:

Պատասխանի եառ և ասեմ ցհրեշտակն. իսկ զի՞նչ են երկու ձիթենիքն՝ որք կան ընդ աջմէ և ընդ ահեկէ աշտանակին: Եւ հարցի կրկին՝ և ասեմ ցնա. զի՞նչ երկու ոստք ձիթենեացն՝ որք ի ձեռս երկուց ճրագաբերանացն ոսկեաց արկանելեաց. և ի վեր հանելեաց

զճաշական ոսկիս: Եւ ասէ ցիս. ո՞չ գիտես, զինչ են այդոքիկ. և ասեմ, ո՞չ տէր: Եւ ասէ ցիս. դոքա են որդիք պարարտութեան՝ որք կան առաջի տեառն ամենակալի:

Ընթերցուածս ի գործոց Առաքելոց:

Զբանն առաքեաց որդւոցն իսրայէլի, աւետարանել զխաղաղութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. սա է ամենայնի տէր: Դուք ինքնին գիտէք զբանն, որ եղև ընդ ամենայն հրէաստան սկսեալ ի գալիլէէ յետ մկրտութեանն, զոր քարոզեաց Յովհաննէս, զՅիսուս որ ի Նազարէթէ՝ զոր էօծ Աստուած հոգւով սրբով և զօրութեամբ:

Ալէլուիա ալէլուիա:

Սաղմոս կցորդ ԽԴ:

Վասն այսորիկ էօծ զքեզ Աստուած Աստուած քո իւղով ուրախութեան առաւել քան զընկերս քո:

Աւետարան ըստ Մարկոսի:

Եւ մինչ էր ի բեթանիա ի տան Սիմոնի բորոտի բազմեալ. եկն կին մի. որ ունէր շիշ իւղոյ նարդեան աղնուի մեծագնոյ, և բեկեալ զշիշն եհեղ ի վերայ գլխոյ նորա: Եւ աշակերտքն զչարէին և ասէին, ընդէ՞ր եղև կորուստ իւղոյդ այդորիկ: Արթ էր զայդ իւղ վաճառել աւելի քան զերեք հարիւր դահեկանի. և տալ աղքատաց, և զայրանային նմա յոյժ: Եւ Յիսուս ասէ ցնոսա. թո՛յլ տուք զմա. զի՞ աշխատ առնէք. զի գործ մի բարի գործեաց դա յիս: Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, և յորժամ կամիք կարող էք առնել նոցա բարիս. այլ զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ ունիք: Դա զոր ունէր, արար. յառաջագոյն խնկեաց ըզմարմին իմ ի նշան պատանաց: Ամէն ասեմ ձեզ՝ ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ

ամենայն աշխարհ. և զոր արար դա՝ խօսեցի յիշատակի զորա։

Եւ ապա ասեն շարական ըստ խորհրդոյն. դ՚։

Որ յառաջագոյն յօրէնս՚։
Որ խոնարհեցար ի մեզ՚.
Որ ի վերնատունն սուրբ՚։
Որ զարդարես սովաւ՚։

Եւ ապա ասեն զմեղեդիս։

Հայր ամենակալ որ ա՚։
Որդի աստուծոյ իւղ թափեալ։
Հոգիդ ճշմարիտ օծ՚։
Երրեակ միութիւն՚։

Ապա ասի Սաղմոս կցորդ. ԻԲ։

Օծեր իւղով զգլուխ իմ՝ բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս։

Ընթերցուածս Երգոց երգոյն Սողոմոնի։

Պարտէզ փակեալ քոյր իմ հարսն. պարտէզ փակեալ և աղբիւր կնքեալ։ Առաքումն քո դրախտ նռնենեաց հանդերձ պտղօք ծառոց՝ ծաղիկ հանդերձ նարդոսիւ։ Նարդոս և քրքում. եղէգն՝ և կինամոն. հանդերձ ամենայն փայտիւք լիբանանու՝ զմուռս և հալուէ հանդերձ ամենայն առաջին իւղովքն։

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէ Է՚։

Եւ արասցէ տէր Սաբաւօթ ի լերինս յայսմիկ ամենայն հեթանոսաց. արբցեն զուրախութիւն. արբցեն զգինի՝ օծցին իւղով ի մրրոյ պարզելոյ։ Եւ ընկալցին ի լերինս յայսմիկ՝ պատմեա զայս ամենայն հեթանոսաց. զի այս խորհուրդ է ի վերայ ամենայն ազգաց։ Օ՚օրացաւ մահ՝ և եկուլ. և դարձեալ եհատ աստուած զամենայն արտօսր յամենայն երեսաց. և զնախատինս ժողովրդեանն եբարձ յամենայն երկրէ՝ զի բերան տեառն խօսեցաւ զայս։

Յօհաննու առաքելոյն ի կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս։

Զայս գրեցի ձեզ՝ զի մի՝ ոք զձեզ մոլորեցուցանիցէ։ Եւ

14361

զուք օծութիւնն՝ զոր ընկալայք ի նմանէ՝ բնակեսցի ի ձեզ. զի չէ՛ ինչ պիտոյ թէ ոք զձեզ ուսուցէ. այլ որպէս նորա օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վասն ամենայնի՝ և ճշմարիտ է՝ և չէ սուտ. և որպէս ուսոյցն զձեզ, կայք ի նմա։ Եւ այժմ որդեակք՝ կացէք ի նմին. զի եթէ յայտնեսցի, ունիցիմք համարձակութիւն, և մի՝ ամաչեսցուք ի նմանէ ի գալստեանն նորա։

Ալէլուիա արուեստիւ։

Վասն այսորիկ՝ օծ զքեզ աստուած աստուած քո իւղով ուրախութեամբ առաւել քան զընկերս քո։

Եւ ապա ասի Սաղմոս. կցորդ. ԻԲ։

Օծեր իւղով զգլուխ իմ։

Աւետարան ըստ Յօհաննու։

Եւ էր մերձ զատիկն հրէից. և բազումք ելին յերուսաղէմ, ի գաւառէ անտի յառաջագոյն քան զզատիկն, զի սրբեսցեն զանձինս իւրեանց։ Խնդրէին զՅիսուս, և ասէին ընդ միմեանս՝ մինչ կային ի տաճարին. զիարդ թուի ձեզ՝ եթէ ոչ գայցէ ի տօն այսր. պատուէր տուեալ էր քահանայապետիցն և փարիսեցւոց. զի թէ ոք գիտասցէ թէ ուր է. դուշակեսցեն զնմանէ, զի կալցին զնա։ Իսկ Յիսուս վեց աւուրքք յառաջ քան զզատիկն եկն ի Բեթանիա. ուր էր Ղազար մեռեալն. զոր յարոյցն ի մեռելոց։ Եւ արարին անդ նմա ընթրիս. և ի սպասու կայր Մարթա. և Ղազար մի էր ի բազմելոց ընդ նմա։ Իսկ Մարեմայ առեալ լիտր մի իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ. էօծ զոտսն Յիսուսի. և հերով իւրով մաքրէր զոտս նորա. և տունն լի եղև հոտոյ իւղոյն։ Ասէ մի ոմն յաշակերտաց անտի Յուդայ Իսկարիովտացի. որ մատնելոցն էր զնա։ Ընդէ՞ր ոչ իւղդ այդ վաճառեցաւ երեք հարիւր դենարի, և տուաւ աղքատաց։ Զայս ասաց՝ ոչ

զե աղքատաց ինչ փոյթ էր նմա. այլ զե գող էր՝ և զարկողն ինքն ունէր. և որ ինչ անկանիւրն նա կրէր։ Ասէ Յիսուս. Թոյլ տուք զմա. զե յօրըն պատանաց իմոց պահեսցէ զայդ։ Աղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք. զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։ Իբրև գիտաց ժողովուրդ բազում ի հրէից թէ անդ է, եկին, ոչ միայն վասն Յիսուսի, այլ զե և զՂազար տեսցեն, զոր յարոյցն ի մեռելոց։ Խորհուրդ արարին քահանայապետքն՝ զե և զՂազար սպանցեն։ Բանզե բազումք ի հրէից երթային՝ և հաւատային ի Յիսուս։

Քարոզ ձայնիւ տեառն Ներսիսի ասացեալ՝ ըստ անուան իւրոյ։

Նոր օրհնութիւն ընդ հայցուածոց մաղթանաց մատուցանեմք առաջի քո հայր անսկիզբն. որդի անժամանակ. հոգի մշանջենաւոր. մի աստուածութիւն և զօրութիւն. որով գոյացան էութիւնք իմանալեաց և տարրեղինաց. յորոց և բնութիւնն խորհրդաստեղծ անկերպիդ կերպարան. որոյ խաբմամբ խաւարին յարփիականն մերկացեալ լուսոյ։ Սակայն ոչ անտես եղեալ ի քէն բարերար. ահա ընկալցիս զպաղատանս ժողովելոցս յաղագս առաջիկայ օծման իւղոյս ընդունելոյ առ ի քէն շնորհս. աղաչեմք։

Էիդ լուսոյ անեղի ծագեալ ի ստորինս. մի ի յերից ծագումն անուն Միածինդ. օծեր աստուածութեամբդ իբր իւղով զառեալն ի մէնջ մարդկութիւն. զնոյն օծումն ընդ զգայականի խառնեալ օծութեան. օծեր իւղով ուրախութեան զանդամս մարմնոյ քո զեկեղեցի յօդեալ ընդ քեզ միութեամբ ի գլխոյդ ահարոնեան ի գրապանս իջեալ զգեստուց. իւղ թափեալ անուն լցեր անուշահոտութեամբ զանհամութիւն բնութեանս. վասն որոյ և օրիորդք առձայնեալ փեսաւէրացն առաքելոց. հաստատեալ զինքեանս իւղով այս օրհնութեամբ. ահա ընկալցիս։

Բաբուն պանծալի վեհիցն և ստորնայնոցս խորագոյն հիման եկեղեցւոյ քո ճարտարապետ. որ և ի հնումն զորդեգրութեանն աւետիս աղաւնեաւ հոգւոյն ի տիպ ձիթենւոյ առ Նոյ ճանուցեր. զնոյն Մովսէսիւ ծաղկանց քոյիւք ընդ սոյն խառնութեամբ նշանակեցեր ընդ մերս օծութեան զչորից առաքինութեանց խառնել միութիւն յորդիս օծելոց. որով օծան պետք նախնի օծելոցն հնոյ օրինին. դասք թագազարմից և մարգարէից. քահանայիւք և պաշտօնէիւք. սովաւ և ի

նորումն ըզ ի ձեռս աւազակաց անկեալ նախահօրն զվէրս հոգւոց բըժշկեալ. զմարգարէին բարբառ լցեալ։ օծեր իւղով զգլուխ և բաժակաւդ իմաստութեան զուարճացուցեր. ահա։

Սովին օծմամբ իւղոյ զարդարեցեր զեկեղեցի քո Քրիստոս անհիւթական հոգւոյն իջմամբ նախ զորս ի վերնատունն. զնոյն ընդ հիւթականիս իւղոյ և ջրոյ զհոգւոյդ խառնեալ զօրութիւն. ծնար սովաւ զառ ի քեզ հաւատացեալս յորդիս լուսոյ և յորդիս տրունջեան. յօծումն քահանայական և թագաւորական. դրոշմն տիրական և կնիք զգայական. ծերութեան իմաստութիւն ի ձէթ հոգւոց պարարտութեան. յորմէ օծան հեթանոսք պարզեալ իւղով ի լերին սրբութեան. ահա"։

Եկեալքս ի տաճար փառաց քոց օծեալդ Աստուծոյ հովուապետք հովուօք և պաշտօնէիւք. զձեռս և զմիտս վերամբառնամք առ մերձդ ամենից. ժամանեա մեզ անհեռանալի մնալով ի մէնջ յանուն քո ժողովելոցս. ընկալ ի լրումն եկեղեցւոյ քո զընծայեալս ի քոյոց պարգևաց. և զհոգւոյդ միացս աներևոյթ զօրութիւն ընդ իւղս այս երևելի ի զուարթութիւն տրամեցելոց. յօծումն եղջեր եկեղեցւոյ խեթիկ զընդիմամարտին զօրութիւն. եղիցի սա նշան ի ճակատ նախահրաւէր կոչելոցն յարքայութիւնդ երկնից. ահա ընկալցիս"։

Սրբեա զմիտս և զխորհուրդս և զգայական բնութիւնս սովաւ օծելոց. ծնանիլ յորդեգրութիւն Հօրդ երկնաւորի ի քում ժառանգակցութիւն. նկարել վերստին զպատկերի քո գեղեցկութիւն ի դէմս ամենի. զգենուլ զքեզ իբր գեղմամբ պարածածկեալ ոչխար և գառն Աստուծոյ. զպատմուճանդ առաջին ըստ անառակին ոչ մերկանալ դարձեալ այլ մաքրել արտասուօք. զխայթուածս թունից մահաբերին սպեղանեաւս այսու բժշկեսցես. ահա ընկալցիս"։

Ի Հօրէ բղխումն անսպառ որդւոյ փառակից հոգի Աստուծոյ. ի ջուրց վերաստեղծիչ կենդանեաց. զգալեաց յառաջնումն և իմանալեաց յերկրորդումն. առ որ պաղատիմք հայցմամբ մաղթանաց ժողովելոցս առաջի քոյ. հեղուլ առատապէս զշնորհաց քոց զանազանութիւն ի յիւղս այս սրբութեան ըստ էակցի քո մարդեղութեան ի մեզ նկարեալ. զհոգի իմաստութեան և հանճարոյ. հոգի խորհրդոյ և զօրութեան. զհոգի գիտութեան և Աստուածպաշտութեան. զհոգի երկիւղի Աստուծոյ և որդեգրութեան. ընուլ սովաւ դրոշմեցելոցն եօթնարփեան շնորհի քո առատութեամբ. բարեխօսութեամբ մաքրեալ հոգւոց քոց բնակութեան արժանացելոց. իններեակ դասուց հոգեղինաց և ընտրելոց ի քէն հոգեղինաց. ամենօրհնեալ կուսի Մարիամու աստուածածնի. մեծին ի ծընունդս կանանց նախահրաւէր այսմ շնորհի Մկրտչին Յովհաննու. նախնոյն վկայից և սարկաւագաց սրբոյն Ստե-

փանոսի. առաքելովք և մարգարէիւք. մարտիրոսօք և ճգնաւորօք. և համբրէն սովաւ օծելովք արդարոցն. և այսրը օծմամբ զմեզ լուսաւորչի որբոյն Գրիգորի. ահա յիշեսցի։

Եւ և՝ առաւել զյորդոր՝։

Զանձինս մեր և զմիմեանս՝։

Ոտեա զմեզ սովին օծութեամբ ի հուր սիրոյ քո հուրդ Աստուած խնդրեմք։

Գերագունի էիդ գթութեան զքոյս պարգև շնորհի ածեմք յաղերս փարելի. շնորհեա սովաւ զխաղաղութիւն եկեղեցւոյ և ընդ սովին տաղաւարեալ հօտի. պահեա զնուիրող այսր ընծայի զՀայրապետս մեր զտէր (այս անուն) քեզ ի հաճոյս. եպիսկոպոսօք և վարդապետօք քահանայիւք և սարկաւագօք և պաշտօնէիւք. զօրացո և զօծեալսն ի թագ արքայութեան սորին շնորհիւ պսակեալ զօրապետօք և զօրականօք. վանել զներհակական զօրութիւնս ոչ օծելոցն խաւարազգեստից. պարգևեա սովաւ և տարերաց զբարեխառնութիւն. բուսոց և տնկոց զառատապէս պտղաբերութիւն. յիշեա և զհոգիս ննջեցելոց մերոց որբալոյս այս իւղոյ Մեռանիւ օծելոց. և ի ծագման քո մեծի իբր զիւղեալ պատրոյկ վառեսցես ընդ նոսին և զմեզ անշէջ քո լուսով. և այժմ ողորմեաց մեզ տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում՝ ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Եւ սարկաւագն քարոզէ։

Եւ և՝ խաղաղութեան զտէր աղաչ՝։

Օրհնեա՞ Տէր։

Եւ ասէ Հայրապետն զաղօթս։

Տէր ողորմութեան և հայր լուսոյ. յորմէ ամենայն տուրք բարիք, և ամենայն պարգևք կատարեալ իջեալ է. շնորհեա՛ մեզ անարժան ծառայիցս քոց զշնորհս քո ի սպասաւորել մեծի և կենարար խորհրդոյս քո. որպէս եառուր Մովսիսի հաւատարիմ ծառային քո. և ծառային քո Սամուէլի. և որբոց քոց առաքելոցն։ Առաքեա՛ զամենազօր հոգիդ քո յառաջադրեալ մեռոնս այս. և արա՛ զսա յօծումն թագաւորական. շնորհք հոգևոր. կեանք կենաց մերոց՝ պահպան և որբարար հոգւոյ և մարմնոյ. իւղ ցնծութեան, որ առաջնորդեցաւ մեզ յօրինացն. և պայծառացաւ ի նոր ուխտդ. որով օծան քահանայապետք. մարգարէք. և թագաւորք. ըստ որում և դու ինքն օծէր ըզսուրբ զառաքեալսն քո. և նոքա զամենեսեան ի ձեռն աւազանին վերստին ծննդեանն. և եպիսկոպոսօք և քահանայիւք. յորոց վերստին ծնանին մանկունք եկեղեցւոյ մինչև ցայսօր։ Այո՛ տէր Աստուած ամենակալ. իջցէ՛ ի սա՝ շնորհք երկրպագելի և սուրբ հոգւոյդ. զի լիցի սա զգեստ անապական. կնիք կատարելութեան. կատարումն ի տպաւորել զլուսացեալսն յաստուածային աւազանն. առ ի յընդունել զսուրբ անուանակոչութիւն ըստ միածնի որդւոյ քո անուան. ի ձեռն ամենասուրբ հոգւոյդ լինել նոցա սովաւ առաջի քո ծանօթ և ընտանի. և զամենայն զծառայս՝ զարս և զկանայս, սուրբ հոգւով և մարմնով պահեա՛ զերծանիլ յամենայն չարութենէ և յամենայն մեղաց փրկիլ. ծածկութիւ անապական փառաց քոց ճանաչել զքեզ ի ձեռն սուրբ քո այսմ նշանի. և սիրելի լինիլ սրբոց հրեշտակաց և հրեշտակապետաց և ամենայն երկնային զօրութեանց քոց. և ահաւոր երևիլ ամենաչար և անմաքուր հոգւոյն։ Լինիլ քեզ ժողովուրդ սեպհական. թագաւորական. և քահանայական. յազգ սուրբ կնքեալ յամբծութիւն մեռոնիս այս. և ունիլ զՔրիստոսդ ի սիրտս իւրեանց ընակեալ. հանդերձ քև հայր՝ և ամենասուրբ հոգւովդ. զի սուրբ ես տէր Աստուած մեր և ի սուրբս հանգուցեալ. և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Աստուծոյ երկիրպագեսցուք։

Դպ. Առաջի՛ քո տէր։

Քեզ Աստուած բոլորից՝ և թագաւոր յաւիտենից. զպարանոցս սրտի գոհաբանութեամբ խոնարհեցուցանեմք. որ

զանարժանութիւնս մեր պաշտօնեայս լինել արժանի արարեր քո այսմ աստուածային խորհրդոյս։ Բարոզեմք զողորմութիւն քո զոր առատապէս ի վերայ մեր հեղեր. ընկալեալ ի քէն զսրբութիւն Մեռոնիս ի գլուխս մեր. որ մեռոն թափեալ անուանեցար՝ Քրիստոս Աստուածդ մեր. և քոյով անուշահոտութեամբդ լցան ամենայն երևելի և աներևոյթ արարածք։ Վասնորոյ և յամենեցունց քեզ վայելէ ամենայն երկրպագութիւն. ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտ"։

Եպիսկոպոսապետն տայ զերդումն ասելով։

Երդմնեցուցանեմ զքեզ նիւթ ձիթոյ. յանուն Հօր ամենակարողի որ արար զերկինս և զերկիր. և զծով և զոր ի նոսա. զի ամենայն ներգործութիւն սատանայի և չարութիւն նորա եթէ ելցէ ի քեզ, լեցի ելքէն հեռացեալ. որպէս զի օրհնութեամբ զօրասցիս յօծեալսն. քեզ տպաւորել զհոգին սուրբ յանուն Հօր ամենակարողի. և Որդւոյ տեառնն մերոյ Յիսուսի Քրիստոսի. այժմ և միշտ"։

Եւ սարկաւագն քարոզէ։

Օրհնեա՛ տէր։

Եւ ապա Հայրապետն ասէ զաղօթս։

Արժան և իրաւ է ճշմարտութեամբ զքեզ փառաւորել յամենայն ժամ և յամենայն տեղւոջ տէր ամենակարող հայր յաւիտենական Աստուած. որ ի սկզբանն ընդ բազմապատիկ պարգևացն որ ի քումմէ գթութենէդ՝ հրաման ետուր երկրի բուսուցանել զփայտս պտղաբերս. ընդ որս և զձիթենի ծառն պաղարթաղուարթ արարեալ ետուր մեզ. ուստի մարդիկ կթեցին պտուղ. և մղեալ անտի զձէթս որ նիւթեալ է ի Մեռոնս սուրբ. յոր

և Դաւիթ մարգարէն շնորհօք սուրբ հոգւոյն նայեցեալ ի բացուստ սաղմոսէ. ետուր ուրախութիւն սրտից մերոց ի պըտղոյ ձիթենւոյ։ Նաև յորժամ ի մեղաց աշխարհ սրբեցաւ հեղեղաւն՝ ծփեալ տապանին ի մէջ ջրոցն, աղաւնին ետ մխիթարութիւն և նշանակ ցամաքութեան՝ զտերև ձիթենւոյն աւետարանեալ զխաղաղութիւն որ տուաւ երկրի։ Եւ այս խորհուրդ լուսաւորեցաւ ի յստակ միտս ի վերջին ժամանակս ջրով մկրտութեան, որով լուանի ամենայն մեղք. և յօծութիւն ձիթոյս, որ զուարթացուցանէ զհոգիս։ Դու հրաման ետուր և ծառային քում Մովսէսի զահարօն եղբայր իւր նախ լուանալ ջրով, և ապա՝ օծանել զնա քահանայ հեղմամբ այսմ իւղոյ։ Իսկ այժմ ևս առաւելապէս փառս տուաւ այսմ նիւթոյ. զի ի լուանալն հաճեցեալ և սիրեցեալ որդւոյ քո տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յաչսն Յորդանանու՝ զհոգին սուրբ առաքեցեր ի վերայ նորա ի նմանութիւն աղաւնոյ. և օծեր զնա Քրիստոս ըստ սաղմոսերգոյն Դաւթի. Էօծ զքեզ Աստուած՝ Աստուած քո իւղով ուրախութեան առաւել քան զընկերս քո։ Վասն այսորիկ աղաչեմք զքեզ տէր. սուրբ՝ ամենակարո՛ղ, ամենակա՛լ, և յաւիտենական. խնդրեմք ի քէն ի ձեռն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որդւոյ քոյ, որպէս զի կամօք քոյ սրբեսցես օրհնութեամբ զայս նիւթ պարարտութեան և խառնեսցես օրհնութեամբ յիւղս յայս զսուրբ հոգիդ և զզօրութիւն Քրիստոսի քոյ՝ յորոյ անուն կոչեցաւ սա օծութիւն. որով օծեր զքահանայս, և զթագաւորս զմարգարէս և զքո վկայսն. զի եղիցի սա օծութիւն փրկութեան այնոցիկ, ոյք կենդանանան մկրտութեամբն ի ջրոյ և ի սուրբ հոգւոյդ. որպէս զի ընկալցին ի քէն զերկնաւոր օգնութիւնդ ի ձեռն միածնի Որդւոյ քոյ և

տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի. որ ընդ քեզ և ընդ սուրբ
Հոգւոյդ երկրպագի այժմ և
յաւիտեանս. ամէն։

Եւ սարկաւագն քարոզէ.

Եւ եւս խաղաղութեան զտէր"։

Օրհնեա՜ Տէր։

Քահանայապետն ասէ զաղօթս զայս.

Սուրբ ահաւոր անուն, լոյս
ի լուսոյ, և ծագումն առ ի
Հօրէ, Ստուած բոլորից. և
ստեղծիչ գոյից՝ տէր կամարար
Յիսուս Քրիստոս որդի Աս-
տուծոյ. արարիչ ընդ Հօր
քում և ընդ Հոգւոյդ՝ էից՝ որ
են ի տեսման և ի ծածկու-
թեան. որ եաղ՝ և էիր միշտ
անթերի լրութիւն. առեր զմերս
իսկապէս, զի ի լրութենէ քում-
մէ լցուցես զամենեսեան՝ օծ-
եալ օծութեամբդ, և օծումն
համայնից ի քոյդ անուանելոց։
Որոյ սկզբնաձիր օծմանս այս
հնորհի՝ զօրս զայս ցուցեր մեծի
հինգշաբաթոջս՝ ստուերականի
և հնոյ օրինին զատկի. յո-
րում տօնեմք պարերգութեամբ
հրեշտակին զպարգև աշխատու-
թեան ամէնիմաստիդ յիւղ զը-
ւարթ անբիծ դաւանմամբ. զոր
ի վերուստ օրինօքն և մարգա-
րէիւքն օրինակեցեր զճշմար-
տութիւն այսմ լուսափայլ
իւղոյ օծութեան. անդստին
ի հարցն գծագրեցեր զօրինակն
մինչև ի լրումն ածեր զիսկու-
թիւնն ճշմարտապէս։ Քանզի
առ Նոյիւ ի ձեռն սաղարթին
ձիթենւոյ բերմամբ աղաւնւոյն
յետ հեղեղելոցն մեղօք ջրովք
հեղձականին, ծանուցեր զա-
ղաւնակերպ հոգւոյ քո իջումն
առ ի Քէն և ի Հօրէ ի վե-
րայ նորածնելոցն. զորդեգրու-
թեանն պայման բերելով սովին
օծմամբ զկնի մեղացն հեղձա-
նելոյ ի ջուրս աւազանին։

Մելքիսեդեկ օրինակն ճըշ-
մարտութեանդ ի ձիթաստա-
նեաց լերինն ուր յետոյ ոտք
մարմնացելոյդ Աստուծոյ կացին.
ի վերնոց անտի հրեշտակաց
ի պողոց տեղւոյն իւղեալ օծաւ